Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Ինչպե՞ս զարգացնել սովորողների ստեղծարարությունը Հայաստանի մայրաքաղաքներով Ճամփորդություն թեման ուսուցանելիս : 5-րդ դասարան
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Ամալյա Գալումյան Գուրգենի Ուսուցիչ +374 93 944923 amalya.galumyan@mail.ru Հայոց պատմություն, Համաշխարհային պատմութիուն, Հասարակագիտություն, ՀԵՊ V-XII դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Բ.Ժամկորյանի անվան թիվ 119 ավագ դպրոց 010573730 Ecole119@mail.ru http://yerevan119.schoolsite.am/

Բովանդակություն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ_____**էջ 1**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ_____**էջ 2**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ_____**էջ 4**

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ_____**էջ 9**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ_____**էջ 17**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ,ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ_____**էջ 22**

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ_____**էջ23**

Ներածություն

Նպատակը և հետազոտական հարցը	Արդի աշխարհը գլոբալ զարգացումների, սրընթաց փոփոխությունների աշխարհ է, ոչ մի բան ապահովագրված չէ փոխվելու, հնանալու կամ վերանալու վտանգից: Տեղեկատվական պայթյունը հանգեցրեց տեղեկույթի ծավալի շեշտակի աճի, առավել մեծ ընդգրկումով ու արագությամբ ընթանում է տեխնոլոգիական զարգացումը: Կրթության արդիականացման գործընթացը Հայաստանում մեկ տասնյակի պատմություն ունի: Այդ ընթացքում լուրջ փոոփխություններ են կատարվել հանրակրթական համակարգի կառուցվածքում, մշակվել է կրթության մասին օրենքը, ստեղծվել ու շարունակվում են ստեղծվել նոր կրթական ծրագրեր, դասագրքեր, իրականացվում են ուսուցիչների մասնագիտական և մեթոդական վերապատրաստման դասընթացներ: Մեր պատկերացումների համակարգ են ներխուժում ինտերակտիվ ուսուցում, կարողունակություններ կոմպետենցիա, մեդիագրագիտություն, ՏՀՏ, ուսուցման նոր մեթոդներ և այլն: 21-րդ դարում մտածողության գլոբալիզացիայի, հասարակության ժողովրդավարացման, բազմակողմանի ինֆորմատիզացիայի պայմաններում մեծանում են պահանջները կրթության նկատմամբ: Կրթության ոլորտում նորամուծությունները միշտ պայմանավորված են գործնական պահանջներով: Այսօր պետք է ձգտել ուսուցչակենտրոն ուսուցումից անցում կատարել աշակերտակենտրոն ուսուցմանը, ուսուցիչը պետք է շարժառիթ ստեղծի, հետաքրքրություն առաջացնի: Դրա համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի այնպիսի նորագույն մեթոդներ, որոնց

	շնորհիվ աշակերտը կամա թե ակամա կդառնա դասապրոցեսի մասնակից: Վերը նշվածից ելնելով, փորձենք գտնել ճիշտ մոտեցումներ մեր հետազոտական հարցի ուսումնասիրման համար, այն է Ինչպե՞ս զարգացնել սովորողների ստեղծարարությունը, ստեղծագործական միտքը պատմական Հայաստանի մայրաքաղաքաները թեման ուսումնասիրելիս 5-րդ դասարանում: Ինձ հետաքրքիր է պարզել, թե ինչ գիտեն կրտսեր տարիքի երեխաները Հայաստանի մայրաքաղաքների մասին, նրանց անվան հետ կապված պատմություններ, պատմական և աշխարհագրական տեղեկություններ: Մեր օրերում ստեղծարարությունը հռչակված է մարդկային ցանկացած գործունեության անբաժանելի մաս: Որպես կրթության բարձրագույն նպատակ սամանվում է ինքնազարգացող, ստեղծագործաբար մտածող ու գործող սովորողի ձևավորումը: Այսպիսով թեմայի նպատակն է աշակերտներին օգնել վեր հանել իրենց թաքնված տաղանդները, բացահայտել ներուժը ցանկացած տարիքում և զարգացնել ստեղծարար ունակությունները, դրական փոփոխություններ իրականցնել կյանքում և ուսուցման գործընթացում: Այսօր պահանջված են ուրույն մտածողություն ունեցող, ստեղծագործ, վառ երևակայությամբ օժտված անձինք, ովքեր դժվարին իրավիճակում փորձում են գտնել լուծումներ, ելքեր: Դպրոցահասակ երեխաները պետք է ոչ միայն տիրապետեն դպրոցական ծրագրերին, այլև կարողանան այն ստեղծագործաբար կիրառել, լուծում գտնել ցանկացած խնդրի, իսկ դա հնարավոր է միայն մանկավարժական գործունեության արդյունքում:

Թեմայի Կարեւորությունը և նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Խոսքը մարդու գործունեության տեսակ է, մտածողության իրականացում՝ հիմնված լեզվական գործիքների կիրառման վրա: Խոսքը կատարում է շփման և հաղորդակցության, հուզական, ինքնաարտահայտման և այլ մարդկանց վրա ազդեցության գործառույթներ: Լավ զարգացած խոսքը ժամանակակից հասարակության մեջ մարդու ակտիվ գործունեության կարևորագույն միջոցներից է, իսկ աշակերտի համար՝ դպրոցում լավ սովորելու միջոց: Երեխայի խոսքը, ազատ և գեղեցիկ հաղորդակցվելը, ստեղծարար միտքը նրա անհատականության ընդհանուր զարգացման ցուցանիշն է: Խոսքի անբավարար տիրապետումը օբյեկտիվ պատ-ճառ է, որը անհնար է դարձնում դպրոցական առարկաները սովորելը, ազատ շփվել ինչպես իրենց հասակակիցների, այնպես էլ մեծա-հասակների հետ: Ուսուցչի և ծնողների հիմնական խնդիրներից մեկը երեխաներին տրամաբանել, ստեղծագործել և մտածել սովորեցնելն է, այսինքն՝ արտահայտել սեփական մտքերը, գիտելիքները, զգացմունքները: Այս նպատակին հնարավոր չէ հասնել առանց ստեղծագործական աշխատանքի: Այստեղ շատ կարևոր է կապը հայոց լեզվի և գրականության հետ, համագործակցելը այդ առարկաների ուսուցիչների հետ և համատեղ դասեր կազմակերպելը: «Ստեղծարարությունն այժմ կրթության մեջ նույնքան կարևոր է, որքան գրագիտությունը, և մենք պետք է դրանց համարժեք վերաբերվենք» Քևն Ռոբինսոն

	Ստեղծարարությունը 21-րդ դարի կարևոր հմտություններից մեկն է և կրթական համակարգի զարգացում է դիտարկվում, այսինքն ուսումնառության հմտություն է համարվում: Գիտելիքները շատ կարևոր են սակայն ոչ բավարար 21-րդ դարում հաջողություն ունենալու համար: Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, և Այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ճիշտ կազմակերպված աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողը գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ստանում է իր կյանքի հետագա գործունե-ության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: Ուսումնառության ընթացքում իրականացվում է երեխայի հոգեկանի զարգացումը, ձեռք է բերվում գիտելիք, մշակվում այլընտրանքային ճանապարհով գիտելիքների ձեռք բերման կարողություն, ձևավորվում ճանա-չողական ընդունակություններ, մարդկանց և իր նկատմամբ սեփական վերաբերմունքի դրսևորում: Կրթության հետ միաժամանակ երեխան պետք է դառնա նախաձեռնող, կարողանա ինքնուրույն հետազոտել, ստեղծագործել, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում,փոխանցել իր իմացածը, ձեռք բերել հաղորդակցական, համագործակցային կարողություններ և ինքնուրույնություն: Միջին դպրոցական տարիքը գիտելիքների կուտակման տարիք է, և այս տարիքի երեխաները պատրաստա-կամ են գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Ուսուցման հիմքը դրվում է ուսումնառության սկզբնական շրջանում և այնուհետև շարունակվում դպրոցական

	ողջ տարիների ընթացքում, և ոչ միայն… Ստեղծարարությունը մտածողություն է, ինչ-որ բան նորովի դիտարկելու ունակություն է: Ստեղծարարությունը ներառում է մարդկային հետաքրքրասիրությունը, զարմանքը և խնդիրների լուծման բերկրանքը: Այն չի կարող հանդուրժել դժգոհություն, ճնշում, հուսահատություն, ուրեմն կարող ենք ասել, որ ստեղծարար մտածողությունը նոր գիտելիքի և գաղափարների ստեղծումն է: Ստեղծարար մարդ ձևավորելը կրթության նպատակն է: Ստեղծարար մարդիկ ինքնավստահ են, ճանաչողության ձգտում ունեն, նոր մտքերի և գաղափարների կրող են, չեն վախենում դրանք իրագործելուց և նույնիսկ սխալվելուց: Սահուն,գրագետ և գեղեցիկ խոսքի ձևավորումը,ստեղծարար միտքը , աշակերտներին կոգևորեն հանդես գալ տարբեր նախաձեռնություններով՝ հավատալով սեփական ուժերին ու կարողություններին, կաշխուժացնեն մշա-կութային կյանքը ինչպես դպրոցում, այնպես էլ համայնքում: Ներկա ժամանակներում, առավել քան երբևէ մարդու ցանկացած գործունեության համար առանցքային նշանակություն ունեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, արագ ու նպատակային գործելու, ինչպես նաև նախաձեռնող լինելու ունակությունները: Նման ունակությունների անհրաժեշտությունը բացատրվում է ներկայիս առաջ քաշված մարտահրավերներով: Ինչպես գիտենք ուղեղը մեր մտքերի, զգացումների և դրամադրությունների սկզբնաղբյուրն է: Գիտենք նաև, որ ուղեղն ունի երկու կիսագունդ՝ աջ և ձախ: Ուղեղի աջ կիսագունդը շատ է տարբերվում ձախից իր գործառույթներով: Այն ինտուիտիվ է, անկանխատեսելի, պատասխնատու է

	նորության և թարմության համար : Ակտիվ վիճակում այն կարող է ըմբռնել ոչ փոխկապակցված երևույթներ և կապ ստեղծել դրանց միջև, ինչից էլ ըստ էության զարգանում է ստեղծարարությունը: Այն կարծես մեր երրորդ աչքը լինի: Դպրոցական նյութերն ավելի հիմնված են ձախ ուղեղի ընդունակությունների վրա՝ տրամաբանական ,վերլուծական մոտեցում, աջ ուղեղի ընդունակությունները, որոնք հիմնված են ստեղծագործական,զգացական, գեղագիտական հասկացողությունների վրա, սովորաբար անտեսված են: Վերը նշված հատկանիշները, որպես կանոն, սաղմնավորվում ու զարգանում են հանրակրթական ուսումնական հաստատությունում, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը: Ուստի հենց այստեղ է անձն իր կյանքի մի քանի առանցքային շրջափուլերում սկսում գործել ինքնուրույն, հանդես գալ նախաձեռնողի , ստեղծագործողի դերում:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետևյալ կոմպետենցիային. Ինքնաճա-նաչողական և սոցիալական կարողունակություն:
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս **հիմնախնդրին/ոլորտին**	Հիմնախնդրին անդրադարձել ենք «Առարկայի դասավանդման մեթոդիկա» բաժնի շրջանակներում:

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ	**Պատմական ակնարկ**
• Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>** <u>Սերգեյ Վարդանյան «Հայոց մայրաքաղաքները»- Երևան 1985թ:</u> <u>«Մարի» հրատարակչություն Հայոց մայրաքաղաքներ- Երևան 2021թ</u> <u>https://www.youtube.com/watch?v=K21I6wTb5bI</u>	**Դեգերող մայրաքաղաքների երկիր** Ճիշտ է ասված, որ պատմությունը ժողովրդի հավաքական հիշողությունն է, նրա կենսագրությունը: Հայ ժողովուրդը պատմական ասպարեզ է իջել անհիշելի ժամանակներից և անցել զարգացման բարդ ու դժվարին, բայց և փառավոր ու հերոսական ճանապարհ: Գալով հազարամյակների խորքից հայ ժողովուրդը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով ու ձեռքբերումներով լի հարուստ պատմություն ու մշակույթ: Թռիչքներով ու արարումներով լի հարուստ պատմության ճանապարհին հայ ժողովուրդը կառուցել է բազմաթիվ բերդեր, ամրոցներ, քաղաքներ: Աշխարհի ոչ մի երկիր իր պատմության ընթացքում այնքան մայրաքաղաքներ չի ունեցել, որքան Հայաստանը: Եթե նույնիսկ չհաշվենք պատմական այս կամ այն ժամանակահատվածում իրենց անկախ հռչակած Փոքր Հայքի, Ծոփքի, Սյունիքի , Կիլիկիայի և այլ հայկական թագավորությունների մայրաքաղաքները, ապա կունենանք 12 մայրաքաղաք՝ Վան, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Շիրակավան, Կարս, Անի և Երևան: Հայ պատմիչները տարբեր առիթներով հիշատակելով անցյալի քաղաքներից որևէ մեկը, հաճախ մանրամասներ չեն հաղորդել նրա արտաքին տեսքի, ներքին կյանքի, բնակիչների և այլնի մասին: Այս բացը մասամբ լրացնում են պեղումները: Անգնահատելի են տարբեր ազգերի պատմագիրների և ճանապարհորդների աշխատություններն ու ուղեգրությունները, որոնք հաճախ օգնում են

	լրացնել այս կամ այն քաղաքի պատմությունը: Բոլոր դեպքերում, տարեցտարի հայտնաբերվող նորանոր նյութերի, փաստաթղթերի, ձեռագրերի, հնագիտական հետազոտությունների շնորհիվ ամբողջացվում է Հայաստանի և նրա 12 մայրաքաղաքների պատմությունը: 1. Վան 2. Արմավիր 3. Երվանդաշատ 4. Արտաշատ 5. Տիգրանակերտ 6. Վաղարշապատ 7. Դվին 8. Բագարան 9. Ծիրակավան 10. Կարս 11. Անի 12. Երևան «Ինչպե՞ս զարգացնել ստեղծարարությունը» թեմայի շրջանակներում սովորողի ինքնուրույնության և զարգացման առանցքում պետք է դնել ակտիվ ուսուցումը, որն իրենից ենթադրում է այնպիսի մեթոդական համակարգի կիրառում, որը չի նախատեսում ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում: Ժամանակակից ուսուցման ակտիվ մեթոդներն ուղղված են խթանելու աշակերտների մտածողությունը, որը բնութագրվում է բարձր ինտերակտիվությամբ, մոտիվացիայով և հուզական ընկալումներով: Պատմության դասաժամերին սովորողների ստեղծագործական ունակությունները զարգացնելու արդյունավետ միջոց է նկարագրական տեքստերի հետ աշխատելը, պատմական գործիչներին նկարագրելը, համեմատելը, քաղաքների նկարագրությունները, պատմական երկերի

	ուսումնասիրությունները, նշանավոր ճակատամարտերի նկարագրությունները: Զարգացնելով, խթանելով ստեղծարարության հիմական բաղադրիչները՝ հետաքրքրասիրություն, համեմատելու, առաջարկություններ անելու, ճիշտ որոշումներ, ելքեր գտնելու, հուզական բաղադրիչն օգտագործելու, նպատակասլացությունը, ինտուիցիան և այլ ունակություններ զարգացնում ենք ստեղծարարությունը, որն անհատի բազմաթիվ որակների միաձուլումն է: Ուսումնական ընթացքի հաջողությունը մեծապես կախված է հենց ուսուցչի աշխատանքի ձևից, ուստի ուսուցիչը պետք է ունենա աշխատանքի իր հաջողված մոտեցումը յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկություններին համապատասխան: Այս համատեքստում ուսուցիչը պետք է՝ 1- Աշակերտին հնարավորություն տա ինքնուրույն զննել, ենթադրություններ անել, հայտնաբերել, կռահել, ճանաչել, համեմատել: 2- Ուսուցման բովանդակությունը համապատասխանեցնի աշակերտների հետաքրքրություններին: 3- Ստեղծի այնպիսի հաղորդակցական իրավիճակներ, որոնք հրապուրիչ կլինեն աշակերտների համար: 4- Աշակերտների առջև դնի իրական, հաղթահարելի նպատակներ, որպեսզի յուրացման ընթացքում նրանք զգան հաջողության հաճույքը: 5- Ամեն կերպ խրախուսի սովորողի նախաձեռնողականությունը, ստեղծարարությունը: 6- Ստեղծի այնպիսի միջավայր, որտեղ սովորողը կարողանա հաղթահարել իր վախը, հասկանալ, որ ձախողումը ոչ մի վատ բան չունի իր մեջ և կիսվել իր

ստեղծարար գաղափարներով:

7- Առաջարկել գաղափարներ, բայց չխառնվել, այսինքն՝ չմիջամտել, թույլ տալ իրավիճակից դուրս գալու ելք գտնել ինքնուրույն:

Ինչպե՞ս աշխատել և ի՞նչ մեթոդներով

Մեր օրերում ուսուցիչները փորձում են դասերը հնարավորինս հեռու պահել ձանձրալի, իրար նման դասերից և թույլ տալ, որ աշակերտները ավելի շատ ներգրավվեն սովորելու մեջ՝ գտնելով նրանց ուսուցման տարբեր մոտեցումներ: Պատկերացրեք դուք մտնում եք մի դասարան, որտեղ լսում եք ուսուցչի միապաղաղ, ձանձրալի ձայնը, նույն տոնը, լարում եք ձեր ուժերը, որպեսզի ուշադրություն դարձնեք նրա ասածներին: Սա լավագույն սցենարը չէ ցանկացած դասի: Կրթության ոլորտն այնքան արագ է փոխվում, որ մենք պետք է հետևենք և հարմարվենք ավելի ժամանակակից ռազմավարություններին, հակառակ դեպքում մեզ համար կարող է դժվար լինել:

Ուսումնահետազոտական գործունեությունը ենթադրում է սովորողի ստեղծագործական ընդունակությունների արթնացում ու ակտիվացում: Ուումնառությունը վերածելով ակտիվ ստեղծագործական աշխատանքի դպրոցը պայմաններ է ստեղծում կրեատիվ անձի ձևավորման համար, ինչը բոլոր ժամանակներում, հիմա առավել ևս, համարվել ու համարվում է անձի ամենակարևոր որակը:

Թեմայի դասավանդման առավել

արդյունավետ և կիրառելի ոչ ստանդարտ դասի տեսակներ են՝

1 Դաս-խաղեր
2 Խնդիր- դաս
3 Դաս-վիկտորինաներ, մրցույթներ
4 Կլոր սեղան
5 Դաս-ճամփորդություն
6 Դիզայն-մտածողություն
7 Ոլորահատ սղոց

Դաս-խաղերի մեթոդի էությունը խաղի և աշխատանքի սինթեզումն է, որի ուսումնական նպատակը նման է խաղային առաջադրանքի, և դասը ենթարկվում է խաղի կանոններին, դպրոցականների կողմից պարտադիր ոգևորությանը և բովանդակության նկատմամբ հետաքրքրությանը: Նման դասերին ստեղծվում է դրական, ոչ ձևական մթնոլորտ, խաղերը զարգացնում են սովորողների ստեղծագործական ոլորտը:

Խնդիր-դասի ժամանակ պետք է ստեղծել պրոբլեմային իրավիճակներ և ներգրավել աշակերտներին դրանց վերլուծմանը: Մեր նպատակը պետք էլինի ոչ միայն խնդրի առաջացումը, այլ հարցերի միջոցով օգնել աշակերտներին ինքնուրույն եզրակացություններ անել: Դա նպաստում է մտավոր ակտիվացմանը, որի արդյունքում ստեղծարարությունը մղվում է առաջին պլան:

Դաս-մրցույթները, վիկտորինաները թույլ են տալիս ստուգել սովորողների մեծ մասի տեսական և գործնական գիտելիքները ընտրված թեմայի վերաբերյալ: Նմանատիպ դասերը մեծ հետաքրքրություն են առաջացնում աշակերտների շրջանում, այն

	լայն հնարավորություն է տալիս ստեղծագործական մտքի զարգացման համար՝ հորինելու ինտելեկտուալ հարցեր: Կլոր սեղան-այս մեթոդը կոլեկտիվ քննարկման հնար է, այն սովորեցնում է անկախություն, ակտիվություն, ստեղծարարություն: Մեթոդի առանձնահատկություններն են՝ 1. Բոլոր մասնակիցները հավասար են ոչ ոք իրավունք չունի թելադրել իր կամքը և կարծիքը: 2. Բոլոր մասնակիցները պետք է կարծիք հայտնեն: 3. Սեղանը իրոք պետք է կլոր լինի, որպեսզի մասնակիցների շփումը լինի աչք աչքի, ինչը բերում է ակտիվության մեծացմանը: Պատմական դաս- ճամփորդություն Աշակերտները կարդում են պատմական նյութը, բաժանում ենթամասերի, ապա կազմում են ճամփորդության իրենց ծրագիրը, որի ընթացքում հավաքում են տեղեկություններ, հետաքրքիր փաստեր, նկարներ,հորինում պատմություններ՝ զարգացնելով իրենց երևակայությունը և ստեղծարար միտքը, որից հետո կարող են ստեղծել իրենց ճամփորդության քարտեզը, հիշողությունների պատ : 4. Դիզայն- մտածողություն Լուծումների վրա հիմնված ռազմավարություն է՝ համագործակցելու և ստեղծագործական ունակությունները խթանելու համար: Կա 5 փուլ 1 Կարեկցիր-զարգացնել կարեկցանքը և պարզել լուծումների շրջանակը:

	2 Սահմանել-սահմանել խնդիրը և դրանց լուծման հնարավորությունը 3 Իդեա, գաղափար-Մտածել և ստեղծել կամ առաջարկել նոր ստեղծագործ գաղափարներ: 4 Նախատիպ-Կազմել լուծումների նախագիծ կամ նմուշ՝ գաղափարները հետագայում ուսումնասիրելու համար: 5 Փորձարկում-Փորձարկել լուծումները, գնահատել և հավաքել արձագանքները: Իհարկե այս բոլոր մեթոդներն էլ կարելի է կիրառել պատմության դասերին: Սակայն 5-րդ դասարանում իմ ընտրած թեմայի համար ես որոշեցի կիրառել դասի իմ նախընտրած տիպերը՝ դաս-խաղեր և դաս ճամփորդություն, որոնց միջոցով կփորձեմ զարգացնել աշակերտների ստեղծարարությունը: Մարդու գիտակցության մեջ աշխարհի արտացոլումը մշտապես թարմացվում և հարստացվում է այն ամենով, ինչ արտա-ցոլված է հանրային գիտակցության մեջ, կապված է ամբողջ սոցիալական գործու-նեության և մարդկային գործունեության ձեռքբերումների հետ: Այսպիսով, խոսքը հաղորդակցական ֆունկցիայի հիմքն է, որն իրականացվում է այս կամ այն լեզվի միջո-ցով: Երեխայի խոսքը ձեւավորվում է նրան շըր-ջապատող մեծերի հետ շփման մեջ: Հաղոր-դակցության գործընթացում դրսևորվում է նրա ճանաչողական և օբյեկտիվ գործունե-ությունը: Խոսքի վարպետությունը վերա կառուցում է երեխայի ողջ հոգեկանը, թույլ է տալիս նրան ավելի գիտակցաբար և տեղին ընկալել երեւույթները: Ռուս մեծ ուսուցիչ Կ. Դ.

Ուշինսկին ասում էր, որ մայրենի լեզուն բոլոր մտավոր զարգացման հիմքն է և ողջ գիտելիքի գանձը: Այդ իսկ պատճառով այդքան կարևոր է հոգ տանել երեխաների խոսքի ժամանակին զարգացման մասին, ուշադրություն դարձնել դրա մաքրությանն ու կոռեկտությանը:

Շատ կարևոր է հետևել կրտսեր դպրոցի աշակերտի խոսքի զարգացմանը, քանի որ խոսքը սոցիալական և պատմական բնույթ ունի: Դրա յուրացումը կարևոր է մարդու՝ հասարակությանը հարմարվելու համար: Դարերի ընթացքում շատ գիտնականներ հետաքրքրվել են այս հարցով: Արդեն 18-րդ դարում այս հետազոտությունն իրականաց- րել է Ն.Ֆ. Կոմանսկին, Ա.Ֆ. Մերզլյակով; XX դարում - Ի.Ի. Փոլսոն, Ա.Ի. Անաստասիևա, ներկա պահին - Մ.Ռ. Լվովը, Թ.Ա. Լադիժենսկայան և շատ ուրիշներ:

Ստեղծարարության զարգացման նպատակով արդյունավետ միջոցների որոնման մեջ ուսուցիչներն ավելի ու ավելի են ուշադրություն դարձնում արվեստի տարբեր տեսակների օգտագործմանը: Այսպես օրինակ պատմության դասերին դերային խաղերն ու ներկայացումները թույլ են տալիս երեխաներին հայտնվել երևակայության աշխարհում, ստեղծագործել, սովորեցնել նրանց նկատել և գնահատել սեփական և այլ մարդկանց սխալները: Երեխաները դառնում են ավելի հանգիստ, շփվող, նրանք սովորում են հստակ ձևակերպել իրենց մտքերը և արտահայտել դրանք հանրության առջև, ավելի լավ զգալ և ճանաչել աշխարհը,

նպաստում է անհատի ինքնաճանաչմանը և ինքնաարտահայտմանը: Այն պայմաններ է ստեղծում սոցիալականացման, հարմար- վողական կարողությունների ամրապնդման համար, շտկում է

	հաղորդակցման որակները, օգնում է գիտակցել բավարարվածության, ուրախության և հաջողության զգացումը: Ժամանակի ընթացքում աշակերտների մոտ ձևավորվում են նկարագրելու, բացատրելու, վերապատմելու, ստեղծագործելու կարողությունը: Աշակերտները հաճույքով են ներկայացնում պատմական որևէ կերպար ու նրա անունից պատմում իրենց մտքերը, մղում երկխոսության, ինչն էլ ստեղծարարության համար խթանող գործոն է:
Օգտագործված մեթոդները, գործիքները	Կիրառել եմ հարցախույզի մեթոդը: Հետազոտությունը հիմնվել է փորձարկված դասի վրա, աշակերտների կողմից լրացվել են հարցաթերթիկներ, վերլուծվել են դրանց տվյալները: **Մնուցի՛ր հետաքրքրասիրությունդ և բոցավառի՛ր երևակայությունդ:** 1. Հայոց մայրաքաղաքներից ո՞րն է ձեզ համար թանկ ու սիրելի: 2. Եթե պատահաբար հայտնվեիք Վաղարշապատ քաղաքում, առաջինը ի՞նչ կցանկանայիք տեսնել այնտեղ: 3. Եթե ձեզ բախտ վիճակվեր ճանապարհորդություն կատարել դեպի Հայաստանի մայրաքաղաքներ, ի՞նչ երթուղի կմշակեիք, որը կլիներ մայրաքաղաքներով շրջագայելու ամենահարմար ու ամենակարճ ճանապարհը: 4. Փորձեք ձեր կողմից սիրված մայրաքաղաքի

	վերաբերյալ հորինել բանաստեղծական մեկ քառյակ, որը կարտահայտի ձեր հույզերն ու ապրումները նրա նկատմամբ: 5. Ինչպե՞ս եք պատկերացնում Անիի բնակիչների կյանքը «ստորգետնյա Անիում»: Փորձեք նկարագրել: 6. Փորձեք հայոց մայրաքաղաքներից մեկի վերաբերյալ գտնել կամ մշակել մի հետաքրքիր կարգախոս, որը կբնորոշի նրա էությունը: 7. Եթե ձեզ տրվեր հայ Արշակունի գահակալների համար մայրաքաղաքի կառուցման վայրի ընտրության հնարավորություն, ապա Մեծ Հայքի ո՞ր նահանգին և գավառին դուք կտայիք նախապատվությունը և ինչու: 8. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են հայոց արքաներն այդքան մեծ նշանակություն տվել մայրաքաղաք ունենալուն: Ի՞նչ նպատակ է դա հետապնդել: Հիմնավորեք ձեր տեսակետը:
Իրականացման ժամանակահատվածը	Երկու շաբաթ
Թիրախ խումբը և շրջանակը	Երևանի Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոցի 5-րդ դասարանի աշակերտներ
/քանակ, սեռային բաշխում/	119 ավագ դպրոցի 5-րդ դասարանի 11 աշակերտ՝ 8 տղա և 3 աղջիկ:

Եզրակացություններ, առաջարկություններ

Ուզում եմ նշել, որ մեր դպրոցն ունի առանձնահատկություն: Մեր ավագ դպրոցում սովորում են նաև 5-9-րդ դասարանցիներ, յուրաքանչյուրից մեկական դասարան: Դպրոցն ունի ֆրանսերենով ավագ լիցեյ, այն համալրվում է միջին դպրոցն ավարտած աշակերտներով: Այս տարվա մեր 5-րդ դասարանում առայժմ սովորում են 11 աշակերտ:

Ուստի իմ հետազոտական աշխատանքը կատարել եմ 11 աշակերտի հետ:

Եվ այսօր և վաղը քո կյանքը լի է տարբեր իրադարձություններով.

Պատերազմը փոխում է մեր կյանքը, մենք բոլորս՝ մեծից փոքր զգում ենք դա, նույնիսկ երբ խաղում ենք և ծիծաղում:

Արի զրուցենք, տետրի մեջ նշումներ անենք, պատմենք ու հորինենք: Չկա ճիշտ կամ սխալ պատասխա, դու կարող ես գրել, նկարել, հետո ջնջել ու սկսել նորից:

Հնարավոր է՝ ընթացքում նոր հարցեր ծնվեն մտքումդ: Ընտանիքիդ անդամները ուսուցիչներդ կկարողանան տալ քո տարիքին հարմար պատասխաններ:

Բայց – դու քո մեջ թաքնված ուժ ունես, որի մասին գուցե ինքդ էլ չգիտես

Բայց - վսահաբար կհայտնաբերես, և այն կօգնի քեզ առաջ գնալ:

Այսպիսով, ամեն ինչի հիմքում դրված է ազատության գաղափարը: Վստահել երեխային, հանարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճանապարհն անցնելու՝ նպաստում են սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը: Այսինքն՝ ուսուցման գործընթացի կազմակերպան նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները ճիշտ և տեղին կիրառելիս կնպաստեն երեխայի ինքնուրույնության ձևավորմանը, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչն այսօր արդիական ու խրախուսելի է: Հաշվի առնելով ուսումնասիրված թեմայի նպատակներն ու դրանից բխող խնդիրները՝ կարելի է եզրահանգել՝

- Նախաձեռնողականության, ինքնուրույնության ու ստեղծարարության զարգացման գործում առանցքային դեր ունի հանրակրթական ուսումնական հաստատությունը:

- Նախաձեռնողականություն, ինքնուրույնություն ու ստեղծարարություն ունակությունների բնականոն զարգացումը մեծապես կապված է ուսուցչի աշխատանքից՝ դասի պլանավորումից մինչև մեթոդների ու հնարների ընտրություն:

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	**Հինգերորդ դասարանի աշակերտների լրացրած հարցաթերթիկների ամփոփումը ցույց տվեց, որ.** **-Գիտելիքների ձեռք բերման պրոցեսը նմանվում է հետազոտական աշխատանքի** **-Աշակերտները գտնվում են ակտիվ վիճակում** **-Նրանց համար աշխատանքը հաճելի էր ու հետաքրքիր** **-Աշակերտները հայտնում էին իրենվ սեփական կարծիքը առանց վախի** **-Աշխատանքի ընթացքում աշակերտները բացահայտեցին իրենց ստեղծագործական ընդունակությունները և համարձակ կատարեցին եզրակացություններ** **Հետազոտական աշխատանքի ընթացքում հանձնարարություններ տվեցի նաև 10-րդ դասարանցիներին, այն է՝ կազմել Հայկական լեռնաշխարհի քարտեզ, որի վրա 5-րդ դասարանցիները առանձնացրին Հայաստանի մայրաքաղաքները: Համագործակցային աշխատանքի արդյունքում ստեղծվեց Հայաստանի և Արցախի Մարզերի քարտեզը (տես հավելվածում):** **Վերը նշված 8 հարցի պատասխաններից ընտրել եմ 2 աշակերտի աշխատանք.** **4-րդ հարցի պատասխան.** **Անի, իմ խեղճ, ավերված քաղաք, Հազարավոր եկեղեցիներից մի քանիսը**

	կիսականգուն: **Ինքան վերք կա սրտումդ, բայց** **Էլի զորավոր ես ու սուրբ Անի:** **Դու անսահման գեղեցիկ ես,** **Մոր նման ջերմագին ես,** **Սիրում եմ քեզ անսահման,** **ԻՄ սիրելի Երևան:** **2-րդ հարցի պատասխան** **Եթե պատահաբար հայտնվեի Վաղարշապատում, իմ գլխում մի միտք կծագեր, կուզեի Մայր տաճարում լսել Հիսուսի ձայնը, որ աղաղակեր և խաղաղություն բերեր աշխարհին:** **Մայրաքաղաքների մասին դիտել ենք ֆիլմ, լսել երգ երազանքների քաղաք Անիի մասին, որից հետո Արի զբոսնենք տետրի մեջ կատարել ենք աշխատանք, պատասխանելով հետևյալ հարցին. Ինչպե՞ս ես զգում քեզ, կշրջագծե՞ս քո զգացածը (տես հավելվածում):**

Օգտագործված գրականության ցանկ

Սուխումլինսկի Բ. Ա. «100 խորհուրդ ուսուցչին», Եր., 1981 թ

Դասավանդի՛ր, Հայաստան, «Ուսուցման արդյունավետ հնարներ», Ս.

Խաչատրյան ,2020թ. Երևան

Մ. Զ. Հակոբյան, Գ. Ռ. Պետրոսյան, Վ.Ա. Մանուկյան ՏՀՏ-ի

օգտագործումն ուսուցման գործընթացում, էջ 139

Սերգեյ Վարդանյան «Հայոց մայրաքաղաքները»- Երևան 1985թ:

«Մարի» հրատարակչություն
Հայոց մայրաքաղաքներ- Երևան 2021թ

https://www.youtube.com/watch?v=K21I6wTb5bI

https://vsu.am/grqer/2018/aprak/xachatryanhasmik.pdf

Հավելվածներ

1. https://learningapps.org/watch?v=pxrhjjw0523



2. **https://learningapps.org/watch?v=p4iysxny320**



3.

SCAN ME

REDMI NOTE 8 PRO
AI QUAD CAMERA

REDMI NOTE 8 PRO
AI QUAD CAMERA

REDMI NOTE 8 PRO
AI QUAD CAMERA


REDMI NOTE 8 PRO
AI QUAD CAMERA


REDMI NOTE 8 PRO
AI QUAD CAMERA

REDMI NOTE 8 PRO
AI QUAD CAMERA